Հավելված 6
ՀԲԿ-ԳՀԱՇՁԲ -20 / 0002 ծածկագրով*
Գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԼԱՆԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0002-3

ք. Հրազդան « 02 » մարտի 2020թ.

«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ, ի դեմս տնօրենի Ժ/Պ **Արմեն Հախվերդյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,ՆԱԵՎ,,ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Լ. Ներսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ____2___ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __2__ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **344058 (Երեք հարյուր քառասունչորս հազար հիսունութ) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[18] Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս ,ներառյալ ԱԱՀ-նե բառերը հանվում են:

[20] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասինե ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[21] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

[22] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[23] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	«ՆԱԵՎ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,	Հասցե՝ Արագածոտնի մարզ,
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32	գ. Արագած 8-րդ փող. 6/2
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220345140192000	Հ/Հ 1570025345410100
ՀՎՀՀ 03017721	ՀՎՀՀ 05022204
Տնօրենի Ժ/Պ Արմեն Հախվերդյան	Տնօրեն՝ Լ. Ներսիսյան
----------	----------
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 02 » մարտի 2020 թ. կնքված
ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0002-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	22451240	Քաղվածք հղիների հաշվառման գրանցամատյանից A5 օֆսեթ	հատ	1.69	507	300	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
5	22451240	Հաշվետվություն դեղատան A4 օֆսեթ	Հ ատ	3.69	1107	300	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
11	22451240	Մինչև 18 տարեկան երեխայի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
16	22451240	Նորածնի փոխանակման քարտ A4 օֆսեթ	հատ	3.67	4037	1100	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
17	22451240	Նախածննդյան պատրոնաժ A5 օֆսեթ	հատ	1.69	1690	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
21	22451240	Մեծահասակների ծառայությունը փոխադրվող 18 տարեկան լրացված երեխաների ցուցակ A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
23	22451240	Գերձայնային հետազոտության բլանկներ A5 օֆսեթ	հատ	1.685	1011	600	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
24	22451240	Վահանաձև գեղձի հետազոտության բլանկներ A5 օֆսեթ	հատ	1.69	507	300	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
25	22451240	Դրամարկղի ելքի օրդեր A5 օֆսեթ	հատ	1.69	845	500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
27	22451240	Մեծահասակի հիվանդության պատմագիր A4 խրոմ կազմով, 8 թերթ	հատ	41.9	125700	3000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
28	22451240	Երեխայի հիվանդության պատմագիր A4 օֆսեթխրոմ կազմով, 8 թերթ	հատ	41.9	41900	1000	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ

9	22451240	Իրազեկման թերթիկ A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
30	22451240	Ծննդաբերության պատմություն A4 օֆսեթ Խրոմի կազմով 8 թերթ	հատ	41.9	50280	1200	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
33	22451240	Թերթիկ մահճակալային ֆոնդի և հիվանդի շարժի հաշվարկ A4 օֆսեթ	հատ	3.69	1476	400	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
36	22451240	Ներմաշկային թեսթ մանտուի A5 1/2 օֆսեթ	հատ	0.99	990	1000	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
37	22451240	Ծննդաբերության պատմագրի ներդիր, հեշտոցային զննում A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
40	22451240	Ուղեգիր պետպատվերում չընդգրկված անձանց N 12 A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
43	22451240	Վարորդի սթափության ձև 1, A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
44	22451240	Վարորդի սթափության ձև 2 A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
45	22451240	Վարորդի սթափության ձև ,3 A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
47	22451240	Տեղեկանք հոգեբույժ-նարկոլոգի A5 օֆսեթ	հատ	1.69	1690	1000	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
49	22451240	Ուղեգիր 18 տար. և բարձր տարիքի 088 ձև A4 օֆսեթ	հատ	3.69	1476	400	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
50	22451240	Հետազոտությունների պատվերի թերթիկ A5 1/2 օֆսեթ	հատ	1.05	3150	3000	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
53	22451240	Հաշվետվություն պետպատվերի շրջանակներում A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
57	22451240	Բժշկական իմունակենսաբանական պատվաստուկների պլանավորման հայտ A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ

0	22451240	Հետվիրահատական շրջան A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
62	22451240	Նախավիրահատական էպիկրիզ A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
63	22811110	Դեղորայքի պահանջագրի մատյան A4 օֆսեթ 50 թերթ	հատ	291	5820	20	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
64	22451240	Բժշկական տեղեկանք 086 ձև A5 օֆսեթ	հատ	1.69	845	500	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
65	22811110	Մատյան 50 թերթ տարբեր բովանդակությունների	հատ	285	34200	120	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
66	22811110	Մատյան A4 օֆսեթ 100 թերթ տարբեր բովանդակությամբ	հատ	490	39200	80	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
72	22451240	Ուլտրաձայնային հետազոտության բլանկ A5 օֆսեթ	հատ	1.69	1690	1000	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
74	22451240	Ձևանմուշ վճարումների փոքր ձև / մեկ թղթի վրա 14 հատ/ A4	հատ	3.69	2214	600	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
76	22451240	Պահանջագիր ձև N2 A4 օֆսեթ	հատ	3.69	2214	600	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
79	22451240	Վիրահատություն՝ կեսարյան հատում արգանդի ստորին սեգմենտում A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
80	22451240	ՀՀ Առ. Նախարարության հաշվետվությունների ձևեր վարչական, վիճակագրական A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
84	22451240	Ֆիզիոթերապիայի հիվանդի քարտ A5օֆսեթ	հատ	1.69	845	500	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
85	22451240	Առողջության անձնագրի լրացման ձևաչափ A4 օֆսեթ	հատ	3.69	2214	600	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
95	22451240	Կղանքի մանրէաբանական հետազոտության հաստ աղու դիսբիոզի վերաբերյալ A4 օֆսեթ	հատ	3.69	1107	300	Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ

96	22451240	Մանրէաբանական լաբորատորիա զգայնություն A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
97	22451240	Մանկական աուտիզմի թեսթ A4 օֆսեթ	հատ	3.69	1845	500	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
98	22451240	Վիճակագրական ձևաչափ հիվանդ նորածնի A4 օֆսեթ	հատ	3.69	738	200	Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32	Աշխատանքների կատարվում է Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ
					344058			

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*******Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում,***

********Ապրանքի մատակարարումը ք. Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում***

********* Ապրանքը պետք է լինի չօգտագործված:***

******** Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:***

ԳՆՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Հ/Հ 220345140192000
ՀՎՀՀ 03017721

Տնօրենի Ժ/Պ Արմեն Հախվերդյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱԵՎ» ՍՊԸ
Հասցե՝ Արագածոտնի մարզ,
գ. Արագած 8-րդ փող. 6/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025345410100
ՀՎՀՀ 05022204

Տնօրեն՝ Լ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 02 » մարտի 2020 թ. կնքված
ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0002-3 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	վճարումները 2020թ. Ըստ ամիսների												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			-	-	42500	68500	99800	125800	145600	189900	221400	265800	310500	344058	344058

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Հ/Հ 220345140192000
ՀՎՀՀ 03017721

Տնօրենի Ժ/Պ Արմեն Հախվերդյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱԵՎ» ՍՊԸ
Հասցե՝ Արագածոտնի մարզ,
գ. Արագած 8-րդ փող. 6/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570025345410100
ՀՎՀՀ 05022204

Տնօրեն՝ Լ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.